

ԲԱԺԱՆՈՐՈՂ ԱԳՐՈՒՄ  
 «ուղիարիտյ համար»  
 Տարեկան 10 ծր.  
 Վեցամսեայ 5 »  
 Արտասահմանի հա-  
 մար Տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 2.50 ժր.  
 Վեցամսեայ 1.25 »  
 ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Իրականացման տողը ստացիկն  
 երեսին համար 40 սանթիմ  
 է. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սանթիմ է. երեքին  
 սակի սեղաններու համար  
 20 ժր. գեղը կրչայ :

# ՇՆԱԲԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԲԹՈՐՆԵՐԸ

Կա և գրամ գրկե  
 րագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.

Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ յեւ տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Ա Ջ Դ

Յառաջիկայ սեպտ. 19ին նոր  
 թաղ. խորհրդի մը ընտրութեան  
 պիտի ձեռնարկուի Սահմանադ-  
 րութեան օրէնքի համաձայն. ուստի այս ուղիւ թախանձագին  
 կը խնդրեմ արգոյ հասարակու-  
 թեանէն որ բարեհաճին աղագսի-  
 րաբար Ս. Պատարագի աւարտու-  
 մէն քիչ ետք, նոյն օրը Աղգ.  
 վարժարան դալ :

Ամէն անոնք որ ընտրելու ի-  
 րաւունք ունին կը սիրեմ յու-  
 սալ որ ներկայս իբր հրաւիրա-  
 գիր համարելով, փութան հան-  
 դէպ ազգին ունեցած պարտքեր-  
 նին յիշեալ օրը խզի մասք կա-  
 տարելու :

Մնամ աղօթարար  
 Տէր Մարտիրոս Մարտիրոսեան  
 Վառնա, 9 Սեպտեմբեր

ԶԱՏԵՆՔ ԱՊԱ ԿՅՈՒՆԵՐ

Որ եւ է գործ քննադատել՝  
 նշանակում է մատնանիչ անել  
 նրա սխալները, պարզել մութ  
 կէտերը, որպէս զի թէ հասա-  
 րակութիւնը այդ գործը իր ամ-  
 բողջ սխալներով մէտսին չընդ-  
 գրկէ և թէ գործի հեղինակը,  
 տէրը ուղղէ իր գործը ապա-  
 գայում նոյն սխալներէն խուսա-  
 փելու համար :

Քննադատութիւնը միայն այդ  
 ձևով կարող է օգտակար լինել  
 թէ գործին և թէ հասարակու-  
 թեանը :

Գծախտաբար մենք հայերս  
 դեռ այնքան կոպիտ ենք քննա-  
 դատութեան մէջ, այնքան միա-  
 կողմանի և անձնական հաշիւնե-  
 րը աչքի առաջ ունեցող, որ  
 մեր քննադատութիւնները աւե-  
 լի հայհոյանքների ամբար են,  
 քան թէ շիտկող և շինիչ քննա-  
 դատութիւն :

Մեր քննադատութիւնների  
 մէջ, գրեթէ շարունակ, գործ և  
 անհատ—խառնվում են իրար. և  
 եթէ գործի հեղինակը որեւէ  
 պակասութիւն ունի կամ անձնա-

պէս բարկացրել է քննադատին՝  
 թէ ինքը և թէ նրա կատարած  
 գործը ենթարկվում են ամե-  
 նա ազտոտ հայհոյանքների սա-  
 րափին. Քննադատի գրիչը մո-  
 ռանում է գործը և ամենամեծ  
 եռանդով մրտոտ է նրա հեղի-  
 նակին :

Այդպիսով հասարակութիւնը  
 փոխանակ օգտուելու եղած քննա-  
 դատութիւնից, փոխանակ կա-  
 րողանալու լաւն ու վատը որո-  
 շել, շփոթվում, շուտում է և հե-  
 տըղհեռէ սովորում է անտար-  
 բեր դառնալ դէպի ամէն մի մա-  
 քուր և օգտակար գործ—մտա-  
 ծելով որ աշխարհի մէջ ամէն  
 բան դատարկ ու աղտոտ է և  
 չարժէ գլուխ ցուցնել կամ  
 որեւէ զոհողութիւն անել :

Այդ տեսակ ազտոտ և կրքերից  
 կուրացած քննադատութիւնը  
 վնասում է և քննադատված գոր-  
 ծի հեղինակին. նա տեսնելով  
 որ իր ստեղծած գործը մի կողմ  
 թողած, խճբճում են իր անհա-  
 տական կեանքը, ցեխոտում և  
 վիրաւորում իր մարդկային ետը՝  
 կամ յուսահատվում և հրաժար-  
 վում է իր սկսած գործից կամ  
 թէ կատաղելով՝ անձնատուր լի-  
 նում իր կրքերին և աջ ու ձախ  
 յարձակումներ գործում. Քննա-  
 դատութիւնը փոխանակ գործը  
 շիտկելու, փոխանակ գործի հե-  
 ղինակին ուղղեցող լինելու  
 քանդում է գործը և բարոյապէս  
 փշրում ու ջախջախում հեղինա-  
 կին և բոլորովին մոլորեցնում  
 նրան :

Բաւական է. այդ տեսակ քնն-  
 քնադատութիւնը մեզ համար կո-  
 ըրտաբար է. գործը և անհատը  
 զատենք ու այնպէս կշռենք :  
 Մեր կեանքը ուղղելու մեծ պա-  
 հանջ կայ : Քննադատենք ուղ-  
 ղելու համար. քննադատենք վե-  
 րաշինելու համար, բայց ոչ կոր-  
 ծանելու, ոչ աղտոտելու. թող  
 մեզ սեւ կրքերը չը զեկալարեն,  
 այլ հասարակութեան շահը և մեր  
 իդէալական ապագան :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Իզմիր, 10 Սեպտ.

Անցեալ անգամ գրածս առա-  
 ջին թղթակցութիւնը դժբախ-  
 տաբար ձեր ձեռքը հասած չէ,  
 ուր ակնարկութիւն մը կար  
 հայ «համալրի» քուէի իրաւուն-  
 քին մասին, որու շարժառիթը  
 եղած էր Փ. Պօլսի այն թղթակ-  
 ցութիւնը զոր Տօքթ. Փափազեանի  
 մասին գրուած կար :

Այսօր՝ այդ խնդիրը գրեթէ  
 դադարած է «Շարժում»ի մէջ նիւթ  
 լինելէ. սակայն, որքան ալ բուն  
 վէճը վերացուած լինի, իմ կար-  
 ծիքով դեռ շատ բան հարկ է  
 գրել մեր ազգի սիւնը կազմող  
 այդ տարրին կեանքի ելեւէջնե-  
 րու, նորա զգացման և հոգու  
 արտայայտութեանց մասին :

Քիչ չի պատահիր, որ ազգին  
 գլուխը կանգնած (•) դատարկա-  
 բան ջոջ-աղաներ արհամարեն,  
 նախատեն ու զրկեն այդ իսկ և  
 իսկ հայ տարրը իր իրաւունքնե-  
 րէն. եթէ Պ. Փափազեան իր վրայ  
 գրուած յայտնի մեղադրանքէն  
 զերծ լինելով արգարանայ իսկ  
 այդ պարագայէն, կան սակայն  
 բազում պարագայներ, զորս կը  
 վկային մեր վերելի ըսածները  
 թէ՛ մենք ունինք այդպիսի դա-  
 սակարգ մը որը կը փորձէ, փոր-  
 ձած է և այժմ ալ կը ճգնի նոյնիսկ  
 առ ոչինչ նկատել գաւառացի տա-  
 րագիր հայը, մինչ ինքը նորա  
 իրաւանց պաշտպանութեան կո-  
 չումը ստանձնած է :

Իմ նպատակս չը լինելով հոս  
 այդ մասին երկար քննութեանց  
 մէջ խորասուզուիլ ի վեր հա-  
 նելու համար սկզբունքի առաւե-  
 րութիւնները ու թողլով զայդ ա-  
 ւելի ձեռնհաս անձերու, ես կը յի-  
 շատակեմ փոքրիկ թերեւս շատ  
 անգամ կրկնուած և կրկնող բան  
 մը, զոր շատ քիչ անգամ յի-  
 շատակուած է, որը կրնայ յստակ  
 գաղափար մը տալ շատերուն  
 մեր գաւառացի հայուն՝ բուն  
 հայուն կեանքի, անոր զգաց-  
 ման և բարոյականի ու գէ-  
 պի ազգը ունեցած զոհաբե-  
 րութեան մասին. Մեր մէջ դեռ

քիչ չեն անոնք, որոնք կամ բնաւ  
 գաղափար չունին հայութեան  
 այդ ստուար տարրին վրայ և կամ  
 ունեցած գաղափարն ին թիւր ու  
 սխալ է. Այս իսկ նկատուով  
 յանձն առի «Շարժում»ի ըն-  
 թերցողներուն պատեւել հե-  
 տեւեալ դէպքը զոր կը պա-  
 տահէր հայ «համալրի» մասին  
 գրուած «Շարժում»ները դեռ հոս  
 չստացուած :

Պատահական ծանօթներէս մին,  
 օր մը շուկայէն անցնելս տես-  
 նելով զիս հրուիրեց «քիչ մը  
 խօսելիք ունիմ» ըսելով. սրճա-  
 րան մը նստանք քանի մը վայր-  
 կեան, ուր յայտնեց թէ՛ իր մէկ  
 բարեկամը կուզէ եղբր նուէր մը  
 ընել. նուէր մը որ պէնքի յաւ-  
 կացուի . . .

Դարուս մարդկային խորդա-  
 ւանքները այնքան յաճախ կը  
 կրկնուին, որ մարդ այսպիսի  
 պարագայներու մէջ ակամայ կաս-  
 կածներ կուենայ թէ դա՛ւ մըն  
 է արդեօք վարպետօրէն սար-  
 քուած, մանաւանդ ինքնաբուխ  
 նուիրատուութիւնը անձանթ  
 չըջաններու մէջ այնքան հաղուա-  
 գիւտ դէպք մըն է :

Բայց խօսակցիս բարոյականին  
 վրայ վստահ էի. կատակածս նորա  
 լրջախոհութեան մասին էր. կըր-  
 նային խաբած ըլլալ զինքը.  
 մանաւանդ թուրքիոյ պէս երկիր  
 մը ուր երկնքի թռչունները  
 իսկ ազատ չեն կրնար շրջիլ :  
 Արդ՝ ներելի էր ինձ քանի մը  
 հարցուփորձեր ընել վերջ միայն  
 վստահելու Բարեկամս վստահեցուց  
 զիս ըսելով որ նուիրատուն իրեն  
 շատ ժամանակէ ի վեր ծանօթ  
 և վստահելի անձ է. եւ երբ քանի  
 մը ուրիշ պարագաներ բոլորո-  
 վին վստահեցուցին զիս, յայտ-  
 նեցի այդպիսի ծանօթ մը ու-  
 նենալս և խօստացայ զրկել  
 նուիրատուին հետ տեսնուելու.  
 պատահական ծանօթս ուրախու-  
 թեամբ բաժնուեցաւ ինձմէ : Ան-  
 ցաւ այս խօսակցութեան քանի  
 մը օր, անցած էր նոյն ժամա-  
 դրութեան օրը եւս, բարեկամս  
 նուիրատուին զացած տեսակ-  
 ցած ըլլալու էր. Ուստի գնացի  
 հասկնալու թէ ինչպէս եղած էր,

քանի որ զիս հետաքրքրած էր  
և յայտնի պատասխանատուութիւն  
մըն ալ կը ծանրացնէր ինձ վրայ :  
Բարեկամս խոր զգացումով մը  
համակուած պատմեց իր տեսակ-  
ցութիւնը այդ «համալ» հայուն  
հետ . այդ, երկտասարդական  
հասակը անցուցած մարդը, մին-  
չեւ ժամանակ մը իր բեռնակրու-  
թեամբ շահած դրամը կը զրկէ  
եզեր հայրենիք իր սիրելիներու  
նեղ օրերը քիչ մը միւթարական  
գարձներու համար . բայց իր  
զրկած դրամները կառավարու-  
թիւնը կը գանձէ ու տուրքի փո-  
խարէն վար կը դնէ եզեր : Այդ  
քանի մը անգամի կրկնութիւնը  
այլեւս կը համոզէ բեռնակիր հա-  
յուն թէ՛ զուր տեղը իր գրամը  
թուրքին քսակը կը լեցնէ . ուստի  
կորոշէ այդ իրեն անձին հա-  
մար չի շահած այլ սիրելիներ-  
ու յատկացուած աշխատանքի  
պտուղը յատկացնել ընկերու-  
թեան, որը զէնք տայ փոխան  
հացի՝ մեր կտրիճ եղբայրնե-  
րուն ձեռքը, որ կարենան  
պաշտպանել իրենց կեանքն ու  
հացը քիւրտին և թուրքին յա-  
փըշտակութենէն : Բեռնակիրը  
համոզուած է որ առանց զէնքի  
հայը իր երկրին մէջ պատու է  
թուրքին կամ քուրտին . ուստի  
պէտք է զէնք ունենալ . . .

Բարեկամս պատմելով այս՝ իր-  
մէն աւելցուց քանի մը խօսք, ու-  
րոնց խոր համոզման մը արտա-  
յայտութիւնն ըլլալը խիստ զգալի  
էր : Կախարչով մեր հայաստանցի  
այդ բեռնակիր գասակարդի մա-  
սին, ըսաւ՝ մեր գաւառացի այդ  
դասը, թէեւ ունի շատ մը  
յոռի սովորութիւնք, որոնք իր  
ստրկական դարաւոր կեանքէն  
յառաջացած են, այսուամենայ-  
նիւ զէպի իրենց ազգն ու հայ-  
րենիքը ունին խոր ըմբռնումներ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱՊԵՏ ԳԱԼՖԱԵԱՆ

Վերջին ներկայացումներէն ի վեր  
չէի տեսած զինքը : անցած օր պա-  
տահմաճը հանդիպեցայ իրեն՝ բարե-  
կամս մէկուէն տունը : Գունաս  
էր ու մտախոհ : Հարցուցինք իրեն՝  
թէ ի՞նչ ընելու մտադիր է :  
«Իմ հետեւելիք ճամբաս շատ  
պարզ է, ըսաւ գաւալի շեշտով մը,  
Ազամեան գայն գծած է արդէն . . .  
(վայրկեան մը լռելէ վերջ), փշոտ է,  
փշոտ, այդ ճամբան, ուր՝ ամէն մէկ  
քայլափոխին՝ կը ջանան հարուածել,  
տապալել ամբողջ գործ մը, ապագայ  
մը . . . թշնամական սեռ ոգին ա՛յն-  
քան կուրացուցած է մեզ, որ զըր-  
պարտութենէ ու հայհոյութենէ զատ  
ուրիշ բան չենք գտներ քաջալիրե-  
լու համար . . . չկարծէք թէ քննա-  
դատութենէ կը փախչիմ, ընդհակա-  
ռակը . միայն ինձ վիշտ կը պատճա-  
ռէ այն՝ որ այդ մարդիկ խիղճ ու  
բարոյական ըսուած բանը չունին . . .  
չեմ գիտեր թէ ի՞նչ կուզեն ինձմէ . . .

և երկիրը շահուած յա-  
կուցներ :  
Ի կատելի կէտը սա է որ, ըսա-  
նա, անոնք սկսած են խորապէս  
զգալ թէ երկիրը մէջ իրենց ունե-  
ցած վիճակի անտանելիութիւնը  
ու «խուրպէթ»ի սոսկալիու-  
թիւնը : Ու իրենց փրկութիւնը  
ազգային փրկութեան մէջ լի-  
նելը շատ լաւ կը հասկնան և ա-  
տոր համար ալ ամեն տեղ ի-  
րենց կրցածնին կընեն : Եթէ կան  
անոնց մէջ շատեր ալ, որոնք  
իյնալով այս կողմերը կը հեռուին  
անբարոյականութեան՝ սպառե-  
լով իրենց նիւթականը, բարոյա-  
կանն ու ֆիզիքականը, ատոնք ալ  
շատ դուրաւ կարելի է զգու-  
շացնելով հեռացնել կորստաբեր  
ուղիէն : Վերջապէս, նա խօսելով  
գաւառացիներու մասին բերանը  
լեղիացած՝ կարծես ներսէն ա՛խ  
մը քաշելով, սկսեց յիշել Պօլ-  
սեցի և կամ Իզմիրցի երի-  
տասարդութեան վերաբերմունքը  
անոր զեղխութիւնը, անբարոյա-  
կանութիւնը և անոր զէպի ազ-  
գային վիճակը ունեցած քարա-  
սիրտ անտարբերութիւնը :  
«Ասոնց կրանիթէ սիրտը մար-  
դուս զայրուելը կը բորբոքէ ու  
մինչեւ ականջնին զեխութեան  
շուայտութեան մէջ զեզերուած  
կեանքերին զգուանք կառա-  
ջացնէ» ըսաւ նա :

Հապա սա ազա ջոճե՞րը, որոնք  
մեր ազգային գործերը վարելու,  
մեր հիշմարկութեանց պաշտօն-  
ները զատելու փքուն ինքնախա-  
բէութեամբ ձրի ազգասէրի ան-  
ուան ետեւէն կը վազէն շունջեր-  
նին կտրած, առանց յոգնե-  
լու : Չարմանալի է իսկապէս  
ատոնց այդ ձգտումը, որոնք մեծ  
ու փոքր կը նկրտեն ազգասէր  
անուն վայելելու առանց մատեր-  
նին կտրելու, առանց ամենա-

թո՛ղ քննադատեն զիս որչափ որ  
կուզեն, ու նոյնիսկ խտապահանջ  
լինին, բայց զէթ թող չյանդգնին  
հազար ու մէկ սուտեր ստեղծելու՝  
իրենց գրուածքներուն մէջ . . .  
Եւ, յուզուած, մի առ մի մատ-  
նանիշ կընէ այն ամէն գպար-  
տութիւնները, որոնցմէ բացա-  
յայտ թշնամութեան մը հոտը կը  
բուրէ :  
Բարեկամս կը ջանայ հանդար-  
տեցնել զինքը . առարկելով որ պէտք  
չէ կարեւորութիւն տալ այդ վայ-  
րահաչ յարձակումներուն, որովհե-  
տեւ, կըսէ, «Լուրջ ընթացող մը,  
որ քիչ շատ խոհականութիւն ունի,  
արդէն պիտի զգայ այդ յարձակում-  
ներուն իրական արժէքը ու պիտի  
ծիծաղի» . . .

«Դժբաղդաբար, հայ մամուլի մէկ  
մասը, փոխանակ ծիծաղելու, նոյն-  
իսկ անգիտակցաբար արձագանք ե-  
ղաւ այդ գրուածքներուն, որոնք  
կարող են թուեաւորել հասարակու-  
թեան կարծիքը, որմէ կախում ու-  
նի անշուշտ իմ ամբողջ ապագան» . . .  
Գալֆաեան բացարձակապէս իրա-  
ւունք ունէր :

փոքր շահուածութիւն մը իսկ ընե-  
լու : Եթէ համոզուած են, որ ազ-  
գասիրութիւնը լաւ բան է ուրեմն  
ինչո՞ւ անկեղծօրէն չեն սիրեր .  
միթէ՞ ատոնք չեն կրնար ըմ-  
բռնել թէ կեղծաւորութեամբ ամ-  
բողջ ժողովուրդ մը եթէ կարե-  
նան խաբել ու ազգասէրի գիմա-  
կին տակ յաշողին մանել, անո-  
նք պտտումութիւնը կամ ապագան  
շուտով կրնայ իր երկաթէ ճան-  
կերով դուրս բերել զիրենք այդ  
գիմակէն ու իրենց իսկական  
գոյնը յայտնի ընել ամէնուն :

Ռուչուրի, 11 Օգոստ.

«Իրաւունք» թերթի 688րդ թի-  
ւին մէջ բարի պտուղին մէկն ալ  
նորէն «գրութեցի և ներսօցի»  
մոխիր խառնեքէր : «Ռուչուրցի»  
ստորագրութեամբ : Մենք զմեզ  
չենք թոյլատրեր այդ նման յոգ-  
ուածադրի մը հաստատել, ու բո-  
լոր գրած տղայամիտ սողերուն  
ըմբերել . բայց զէթ իբր խրատ  
կամ խորհուրդ հետեւեալներն  
ունինք : ( )

Պ. յօդուածագիր, ո՛ւ է նիւթի  
վրայ գրելէ յառաջ խորհիլ հարկ  
է, իւրովի հարցումը ընելով  
թէ՛ արդեօ՞ք գրելիք նիւթի՞նչ  
է . և ես զայն լաւ ուսումնասիրած  
եմ թէ՛ ո՛չ, ու ապա ըստ այնմ  
գրիչ շարժել : Այս սկզբամբ Պ.  
Ռուչուրցի, մենք գրութեցիներս  
ամչցանք ձեր այդ յօդուածը  
կարգալով . ու այնպէս սիրեցինք  
ենթադրել . թերեւս դուք զայդ  
անգիտակցաբար գրած լինելու  
էք . և ձեզ համոզելու համար  
փութանք ձեր գրածներէն մի  
քանի տող յառաջ բերել թէ՛ ա-

( ) Շատ զարմացանք որ Պ. խմբա-  
գիրը այդ նման յօդուած մը չիւրըն-  
կալած ժամանակ իր մասնաւոր գիտ-  
ութիւնը կցած չէր :

Մենք ալ, հասարակութեան հետ,  
պիտի զարմանայինք այդ գրուածք-  
ներուն վրայ, ու պիտի հարցնէինք՝  
թէ ի՞նչ բանէ գրողած կարող են  
լինել, այդչափ աղտոտ լեզուով խօ-  
սելու համար Գալֆաեանին վրայ .  
եթէ մեզի ծանօթ չլինէին կարգ մը  
խնդիրներ, որոնք անգամ մը եւս  
կըստիպեն մեզ կասկածիլ՝ այդ խեղճ  
ու կրակ արարածներուն բարոյա-  
կանին վրայ :

Ստոյգ է որ Գալֆաեան «Օթէլ-  
լոյ»-ի մէջ փայլուն յաջողութիւն մը  
չունեցաւ : Բայց այդ բանը իրա-  
ւունք չի տար մեզ, որ այդ անյա-  
ջողութիւնն իրեւ գէնք առնելով  
մեր ձեռքին մէջ, ելնենք ու հազար  
ու մէկ սուտեր ալ մենք հնարենք  
անոր հաշուին . զերասանին արժա-  
նիքը իսպառ անհետացնելու համար,  
Անյաջողութիւնն մը ազխութիւն  
ապիկարութիւն չի նշանակեր, եւ  
ոչ ալ նուաստացնելու բնոյթն ունի  
Ազամեան, արդէն իրեւ վարժ ու  
տաղանդաւոր գերասան, իր փառքին  
կատարն հասած, քանի քանի ան-  
գամներ չյաջողեցաւ . «Ինչ»-ի եւ ու-  
րիշ գերբուռ մէջ, Բայց ոյգ բանը  
մեզ թոյլ չէր տար որ զինքը ցեխե-  
րու մէջ տապալակենք :

տոնք խակ և ծիծաղելի են . կը-  
սէք, «մենք առ հասարակ ծոյլ  
չենք, մինչդեռ մեր դրութեցի եղ-  
բայրներն աշխատութենէ կը խոր-  
շին, աւուրչէքին նուազութիւնը  
պատճառ բռնելով» : Շատ լաւ Պ.  
յօդուածագիր, մի պահ ձեզ հետ  
համաձայն լինինք . ուրեմն պուլ-  
կարաբնակ բնիկ հայերդ շատ  
հարուստ պէտք էր որ լինէիք, և  
բոլոր աչքի ընկնող քաղաքներ  
ու հրապարակները դուք գրաւած .  
քանի՞ բնիկ հայ վաճառականներ  
կարող էք ցոյց տալ մեզ Վառնա,  
Վիլիպէ և Ռուչուր . տաճիկնե-  
րու ժամանակն ալ դուք էիք միւս  
ազգերէն աւելի առաջնութիւն  
վայելողն, ու հրապարակի գոր-  
ծերու մեծ մասի տիրողն : Ձեր  
այժմեան կացութիւնն ձեր աշ-  
խատասէր չը լինելուն հզօր փաս-  
տերը կուտան, զի քառորդ դարէ  
մը ի վեր ո՛չ ի հուր մատնուած  
էք և ո՛չ ի սուր . որով զձեզ առ-  
հասարակ ծոյլ նկատելն է բա-  
նաւոր : Գալով աւուրչէքի նուա-  
զութիւնն պատճառ բռնելը, շատ  
բանաւոր և օրինական է : Ի՞նչ կը  
կարծէք, (ձեր ըսած բառով)  
«ժխտաներու գ» գոհացում տալու  
համար օրն ի բուն 80 սանթիմով  
և կամ մէկ ֆրանքով աշխատիլ  
հա՞րկ է . ո՛չ պարոններ, ո՛չ,  
առօրեայ վարձատրութիւնը պէտք  
է որ տարբերի . ինչ որ վարժ էք  
տալ գնչուին, նոյնչափ տալու  
չէք հայուն, այլ աւելին . ոչ թէ  
ազգութեան և քրիստոնէութեան  
փտած բառերու սիրոյն համար .  
ապա այդ ցեղին՝ ժողովրդեան  
տարբեր յատկութիւններուն հա-  
մար ջոճիոր այսօր կը զանա-  
զանուի ու կը գնահատուի մեծ  
ազգերուն քով . ինչպէս ուսու կա-  
ռավարութիւնը այսօր Սիպիւրիոյ  
մէջ կը վարուի զանազան ազգե-  
րու զաւակներու հետ . օրինակի

Ու դարձեալ, պիտի ներէինք,  
եթէ գէթ խտապահանջ լինէին :  
Հապա զրպարտութիւնը . . . ստախօ-  
սութիւնը . . . Ձէ՛, ալ չափն ան-  
ցած է :  
Պ. Գօլուեան կը գրէ : «Ձորս հինգ  
տարի կայ, օր մը բարեկամ մը Գառ-  
թի Լաթէնի մէջ ներկայացուց զիս  
մեր առփեսին . . . Ֆրանսերէն բառ  
մը չէր գիտեր . հայերէն խօսիլ փոր-  
ձեցի . . . եւ այլն» :  
«Կորսնցուցի զինքը մէկ քանի  
տարի . . . նորէն իրեն հանդիպեցայ,  
ու լուրեր առի իր վրայ : Այնքան  
ժամանակուան մէջ Ֆրանսերէն եր-  
կու բառ գեռ չէր սորված . . . «տես,  
Արեւելք, թիւ 3999)» :  
Գալֆաեալ Պ. Գօլուեան, պատաս-  
խանելով Անցորդի յօդուածին .  
«Ստոյգ է, զոր Գալֆաեան համո-  
զելով հրաւիրած էր, աւարտին՝ իր  
զիխուն խաղացուած խաղը տեսնե-  
լով, բարկութենէն կասկարովի՝  
«Կինեոյ, կինեոյ» (գրաբակցող)ը պո-  
տար : Անցորդին արուեստասէր բա-  
րեկամները կամ ներկայ չեն գտնուած  
այն հոգիակաւոր ներկայացումին եւ  
կամ նորէն մտոցած են բոլոր այս  
բաները գրել : (Տես, Արեւելք, թիւ  
4045) :

համար մեծ աւուրչէք կուտայ գերմանացիին քանթէ ուուին (իր համարին եղբորը), զի ընդունած է թէ՛ գերմանացւոյն մտքին մակարդակը աւելի բարձր է քան ուուինը . և հետեւաբար պահանջներն ալ աւելի, որով կը դասաւորէ այսպէս, գերմանացի, ուու . հայ, վրացի, պարսիկ, թուրք, չէչէն և այլն : Վերջիններս սր Ղուրանական են, ֆատալիստ են (Աստուած այսպէս կամեցաւ ըսողներ) անոնց աւելի քիչ աւուրչէք կուտայ և այլն :

Դարձեալ կըսէք, «մենք յոյժ սակաւապետներ ենք, ժլատ ըսուելու չափ» : Կերելի թէ չէք գիտեր «ժլատ» որու կըսեն, ձեզի նոր անուն մը տուէք :

Դարձեալ կըսէք, «մենք շերմեռաղներ ենք ճակատադրական հաւատացողի մը պէս», կերելի զձեզ մկրտեալ թուրքեր կուզէք կոչել . ծիծաղելի բացատրութիւն . եթէ այդպէս է, ի դարձ արիք : Դարձեալ ուրիշ ծիծաղելի բացատրութիւն մըն ալ մէջ բերելով վերջ տանք ձեր այդ անլի յօդուածին . կըսէք առանց կարմրելու՝ «մենք ընդհանրապէս տառակաւորութիւն յարգող ու մեծարող սերունդ մըն ենք, կակնածինք մեր կղերէն և աթոռակալէն, ու մեր ժողովրդի ինքնութիւնը անոնց մէջ մարմնացած լինել կը կարծենք» . ուրեմն, կը շնորհաւորենք ձեր անդրջրահղեղեան բրածոյներ լինելն . ի՞նչպէս յարգենք կղերը, երբ իր կուռ խաւարամտութեամբը մեր յառաջդիմութեան սպառնացողը կը լինի . նոյնպէս ի՞նչ իրաւամբ ակնածինք աթոռակալէն որ՝ առանց իր պաշտօնին գիտակցութեան անխիպ կը յայտարարէ «եկեղեցին մերն է, դպրոցը

մերն է» և այլն և այլն : Անդրադառնանք տեղւոյս դրպրոցին շուրջը, որը երեք տարի առաջ բաւական բարեկարգ վիճակ մը կը ներկայէր . ի՞նչ շարժառիթ ունեցաւ խանգարուելու և այժմեան ուսուցիչներով կառավարուելու տխուր բախտին վիճակուելու . պատճառը շատ մեկին և յստակ է . քաղ իս դպրոցավարներու առակութիւնն և տէրտէրին տղիտութիւնն ու անշահութիւնն է : Փրանսացիք ամէն վատ գործի մէջ սովոր են կինէ կակը փնտռել : Դժբախտաբար հայերուս ալ շիճակուած է խաւարի վաւակները՝ կղերը փնտռել, որուն մէջ ուրքով գլխով պառկած կը գտնենք երբ զայն կը պըրպտենք : Հանրածանօթ Արսէն վարդապետը իր խօսած ակեղ ցփեղ քարոզներուն համար քըննադատուեցաւ թերթերու մէջ . սղորմելի արարածը կարծեց թէ դասատուներն են զինքը քննադատողներն, ուստի վրէժը լուծելու համար համոզեց խաւարամիտ աղաները թէ՛ ասոնք անկրօններ են, հարկ է որ վճռուին . աղաներն անսացին յիմարաբար ու խանդարեցին դպրոցը վատաբար : Այսօր այդ յարգելի դասատուները կը դասասխօսեն Ֆիլիպէի ազգային դպրոցին մէջ, տեղւոյն ազգայնոցը նորութեամբ ուրեմն մնացելոյն վրայ դուք ինքնին խորհեցէք ո՞վ Ռուսչուրցի Պ . յօդուածագիր :

Իրակցի  
Ֆիլիպպուրի, 20 Օգոստոս  
Օգոստոս 18ին քաղաքէս մէկ ժամ հեռաւորութեան վրայ ըսպաննուեցաւ (սեբաստացի) Նշան Յարութիւնեան 35—37 տարեկան . ոճրագործը անյայտ է . 19ի առաւօտեան դիակը գտնուեցաւ

մացառներու մէջ ձգուած . սպանութիւնը փայտով է եղած . զոհի գլուխը բարձրովին ջախջախուած է եղեր : Սպանման յաջորդ օրը ձերբակալուեցաւ Արշակ և Գերոն անուն երկու հայեր . մէկը Նշանի կնոջ եղբայրը : Դատը յետաձգուեցաւ մինչեւ սեպտ. 2 . այսօր ալ վկաներու թեր ու դէմ վկայութեան, ոչինչ չստուգուեցաւ՝ հակառակ կառավարութեան բոլոր ջանքերուն . ուստի նորէն յետաձգուեցաւ մինչեւ յաջորդ ամսոյ վերջերը . Գերոն ազատ արձակուել կը կարծուի, մինակ իր ծնողաց մօլեգնաբար պնդելովը գուցէ երկար առեւ բանտ մնայ : Ամիսներ առաջ այս մարդիկ ազարակ մը գնեցին և ժամանակէ մը վերջ Գերոնը չկրնալով ապրիլ իր ծնողաց հետ, իր բաժինը կը ծախէ և ինք կը մեկնի . ամիսներ վերջ Նշան, Գերոնի քեռայրը, կսպանուի քաղաքէն ազարակ վերադարձին, Գերոնի քոյրը մեռնողին կինն է, և իր ծնողքը այժմ կը կարծեն թէ, Գերոնը նախանձէն ըրած լինելու է այդ բանը : Չենք գիտեր թէ այդ դէպքը չլինելէ առաջ երկու տեղացիները ո՞վ սպանեց, կամ Գերոնի բանտարկուելէն յետոյ՝ միեւնոյն տեղը եղած երկու ըսպանութիւնները ո՞վ ըրաւ : Մանրամասնութիւնները եթէ յայտնուին կը գրեմ :

ԱԿՆՐԱԿՑԻ  
Փարիզ, 20 Սեպտ.  
Ձեր լրագրոյ վերջին թրեւրէն միտոյն մէջ ցաւօք սրտի կարդացի «Բիւզանդիոն»է արտասպառ մի թղթակցութեան համառօտութիւնը, ի մասին տեղւոյս ազգայններէն ազամանդավաճաւ Էդնայեան եղբայր Պատրիարքարանէ վեց հատ որը ուղղով արհեստ սորվեցնելուն, որ հոս շատ գէշ սպաւորութիւն ըրաւ :

Այդ թղթակցին տուած սուտ եւ սխալ տեղեկութիւններէն արեւու Նման պայծառ կր տեսնուէր թէ, պարզապէս թշնամական ոգւոյ արդիւնք էին իր ստայօղ լուրերը :

Նախ կըսէ թէ Էդնայեանի աղամանդ սաչելու գործարանը Սէն-Տընի փողոցին մէջ է, մինչդեռ անկէ 20 վայրկեանի չափ հեռու Լավրիէթ թաղին մէջ է :

Երկրորդ կըսէ թէ նուպար փաշայի թիմպէլխանէն գործաւորներ առած է, զորս կը զրկէ 2 — 3 ֆրանք տալով օրական, մինչդեռ գաղղացւոց կուտայ 8—10 ֆրանք :

Նախ, Էդնայեան գործատան մէջ հայ գործաւոր չկայ այժմ եւ թէ այդ ապաստարանէն բնաւ իբրեւ գործաւոր իրենք քով մանող չէ եղած . այլ միմիայն իր գրասենեակին համար գրագիր մը առած է որուն լաւ վճարում կընէ :

Երրորդ՝ աղամանդ տաչելու պէս դժուարին եւ նուրբ արհեստին համար, որ հազիւ երկու տարին կըրնան սորվիլ աչալուրջ գործաւորք, ինքը 2—3 օրէն սորվելու չափ դիւրին կը գտնէ, եւ վեհանձնօրէն շարաթ մը պայմանաժամ կը գնէ ամբողջովին սովորելու համար : Արդեօք կարծեց որ գրիչը ձեռքը սուտեր շինելու չափ դիւրին է արհեստ մը սովորելու :

Ահա այս տեսակ ծիծաղելի եւ անհեթեթ սուտերով մուր կը քսէ անձի մը վրայ որ ուրիշներէ աւելի նախաձեռնարկ կըլլայ եւ առ այժմ վեց օրերու ապագայները շինելու գովելի միտումը կուենայ . որոյ իրագործումը բաւական գոհողութիւն ալ կը պահանջէ . այսինքն այդ վեց օրերը մինչեւ որ սովորին եւ իրենց հացը ճարեն, օղով չէ որ պիտի սքանանին, այլ անոնց իւրաքանչիւրին պէտք է ծախսել ամսական 5—6 ոսկւոյ գումար մը, առ նուազն մի տարի ամբողջ որ կընէ մօտ 400 ոսկի : Երանի՛ թէ հայ արհեստաւորներ փոխանակ ուրիշ նուազ շահաւոր արհեստներով պարապելու, փափաք սային մրցելու հրէայ արհեստաւորին հետ այս արհեստին մէջ եւս՝ յորում հարիւր հազարաւոր անձինք կապրին եւրոպայի մէջ եւ միշտ գործ կը գնեն :

—)(—

Պ . Քօլօլեան պատասխանատու է անշուշտ իր այդ գրուածքներուն, քանի որ, իբրեւ անկեղծ ու արդարաբան մարդ, «չէր կրնար սպասել որ, «ամբարտաւան»ին դիմակ վար անհելու համար» : Հիմա տեսնենք՝ թէ ո՞րչափ ճշմարտութիւն կայ Պ . Քօլօլեանի գրչէն ելած տողերուն մէջ :  
1. Չորս հինգ տարի առաջ ի՞նչ հրաշքով ծանօթացաւ (°) արքեօք Պ . Քօլօլեան Պալֆայեանին հետ, քանի որ Պալֆայեան երկու տարի եւ երեք ամիս ի վեր միայն Փարիզ կը գտնուէր : Առանց հեռուն երթալու, եթէ Պ . Քօլօլեանի ամբողջ գրուածքը չափենք աչա երկու տողով, պիտի համոզուինք որ իր ամբողջ գրուածքներուն կէսէն աւելին չափազանցութիւն է :  
2. Ի՞նչպէս արքեօք, քանի տարի յետոյ, երբ դարձեալ «հանդիպեցաւ (°) իրեն» ու «լուրեր» տուաւ (°) իր վրայ, տեսաւ որ «ֆրանսերէն երկու բառ զեռ չէր սորված (°)» քանի որ Պալֆայեան ոչ միայն Պ . Քօլօլեանի հետ խօսելու, այլ նոյնիսկ զինքն անկանալու պատիւը չուներ թէ այս կէտին վրայ հիմնուելիք, ստիպուած ենք, հակառակ մեր կամքին, Պ . Քօլօլեանի ճշմարտախօսու-

թեան վրայ ալ կասկածելու : Բայց անցնինք :  
3 (Բարկութեան կասկածմիւր), Սարսէի «կինեօ՛ւ, կինեօ՛ւ» պոռացած լինելը (°), ի՞նչպէս Պ . Քօլօլեան կարող է պնդել, քանի որ ինք երկրորդ ներկայացումին միայն գացած է իբրեւ թէ . . . եթէ երբէք կը հիմնուի հանրածանօթ պնակալէղի մը անամօթ սուտերուն վրայ, այդ բանն իրեն պատիւ չի բերեր, որովհետեւ, իրապէս, Անգղոյին «արուեստասէր բարեկամներուն» հետ ներկայ եղող բոլոր հանդիսատեսները այդպէս խեղկատակ խօսք չին լսած . որովհետեւ, Սարսէ, լուրջ ու գիտնական ձերունի մը, այդ տեսակ խօսք չէ հանած բերնէն : Ու այդ խօսքը հնարողն ալ, Պ . Չօպանեան, վստահ եղէք, օգտուած է Սարսէի յանկարծական մահէն :  
Յետագայ յանձնարարական նամակը զոր Սարսէ կը գրէ, «Գոլկե՛սի Ֆրանսիզ»ի անգամ Օր . Ֆայիօլի . սպացոյց մըն է արդէն :  
« . . . խօսեցէք այս հայի հետ—չատ հետաքրքրական է . ազատ թողէք, շուտով ձեր արթնատական հետաքրքրութիւնը կը շարժէ, նոյնպէս կը շարժէ ձեր կանացի սիրտը : Ան,

ինձ սիրով ներկայացուած է անձերու կողմէ որ իր պատուաւորութիւնը կը ճանչնան :  
Բացի այդ, անկեղծութեան շեշտը ունի, որ չի խաբար :  
Ձերդ  
Ֆ . Սարսէյ  
Այս նամակին հեղինակը չէր կրնաւար այդչափ ծիծաղելի գեր մը ստանձնել :  
Խնդրը այսչափ լուսարանելէ վերջ, աւելորդ կը համարինք պատասխանել Պ . Չօպանեանի զտանցանքներուն ալ, որոնք իրենց արդար հատուցումն ստացան : Պալֆայեանի հանդիսաւոր մէկ ապօական, որուն տակ տափակցեց է բոլորովին մեր տափակ գրագէտը :  
Վերջացնելէ առաջ, ուրախութեամբ յիշենք նաեւ՝ թէ Պալֆայեան, մայիս 24ին, «Ժողովար»ի թատերասրահին մէջ, մեծ յաջողութեամբ արտասանած է, ֆրանսերէն լեզուով, Համլետի մենախօսութիւնը : Այս առթիւ, տիկին Գօլօմէ Անտիլը, այդ ցերեկոյցի կազմակերպիչը, Պալֆայեանին գրած է շնորհաւորութեան ու շնորհակալութեան սիրուն նամակ մը, որմէ կը քաղենք հետեւեալ տողերը .

« . . . բոլորին հիացուց ձեր մեծագոյն տաղանդը . եւ կը յուսամ թէ այս վերջին անգամ չը պիտի ըլլայ որ ես բաւականութիւն պիտի ունենամ զձեզ ծափահարելու » :  
Մեր անկեղծ շնորհաւորութիւնները՝ Պ . Պալֆայեանին :  
Անաչառ քննադատութիւնը միակ պայմանն է յառաջդիմութեան : Ու անաչառ է ա՛յն քննադատութիւնն, ուր, քննադատը, բոլորովին անկողմնակալ, մի առ մի կը քննէ ու վեր կը հանէ գործի մը կամ անձնաւորութեան մը բոլոր առաւելութիւններն ու պակասութիւնները . հետեւաբար եւ իրական արժէքը :  
Մեր ամբողջ համակրանքը կը նուիրենք «Ճարադ»ին ու «Բազմաժէպ»ին, որոնք, հակառակ մամուլի մէկ մասին բռնած եպիտոլի ընթացքին, գիացան ճանչնալ ու դանադանել ճշմարտը սուտին, ու պաշտպան հանդիսանալ արդարութեան :  
Յովհաննէս Շաւարշ  
Փարիզ, 14 Սեպտ.  
—)(—

Պ. Գ. ԿԻՒԼՊԷՍԵՐԵԱՆԻՆ

Ձեզ պատասխանում ենք իբրև մի հայ հետաքրքիր անհատի, չը նայած որ դուք ասեմապիր հոգաբարձուքան էք ստորագրել:

Ահա մեր պատասխանը. Մեր նկատողութիւնը որոշ է, միայն անհատները չեն որոշված. մեզ նից կարող են շնորհիւն բացատրութիւն պահանջել միայն նրանք, որոնց վերաբերում է մեր նկատողութիւնը, ի հարկ է եթէ բարեհաճին: Մենք համոզված ենք թէ ով որ հասկանալու պէտք ունէր հասկացել է, եւ դարձանում ենք որ ձեզ են մէջ տեղ գցում: այն էլ ձեր անբողջ ինտուիւր միասին:

Խմբ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Սուրհանդակ» կը հաղորդէ թէ Բերայի աղջկանց Արհեստանոցը փակուած է Տիկին Մատակեանի հրաժարուելուն կամ հրաժարեցուցուելուն պատճառաւ:

Եւ իրաւացի կերպով կը հարցընէ թէ ի՞նչու տիկնոջ հեռանալովը այդ հիմնարկութիւնը փակուի, քանի որ նա թոշակաւոր մըն էր և անոր յաջորդ գըտնելը դժուար չէր:

Սիսի Կաթողիկոսական տեղապահը սկսեց է իր միտքները հաւաքել մօտաւոր ընտրութեան մասնակցելու համար: Առ այժմ հոն կը գտնուին Հրանդ Ա. սարկաւազ (տեսուչ Մերսինի աղագային վարժարաններու), Խորէն վարդապետ Դիմաքսեան (քարոզիչ) և ուրիշներ:

Օգոստոս 27ին Տիկին մէջ մեներ է Միքայել Փրիտոնեան, որը Դօրպատի համալսարանէն շրջանաւարտ ելնելով, կը նուիրուի մանկավարժութեան՝ Ներսէսեան դպրոցի մէջ դասախօսելով:

Ինքը կըլլայ հայկական երգերը եւրոպական եղանակով երգելը կովկասի մէջ սովորեցնողը: Եւ մինչեւ վերջին շունչն ալ սիրահար մնաց երգելու:

Տասը հաղար բուպի կտակած է եկեղեցիներու մէջ երգեցիկ խումբեր կազմելու համար: Քսան տարի էր որ հասարակական գործունէութեան ասպարեզէն քաշուած էր:

Վաղը պիտի կատարուի Վառնայի թաղ. խորհրդոյ ընտրութիւնը: Վառնա չը ծնուած հայերը թող չկարծեն թէ իրենք ընտրութեան իրաւունքէ զուրկ են: Թագական խորհուրդը բոլորովին ազգային մարմին է. հայոց Պատրիարքարանի իշխանութեան տակ, և այդ տեղ պուլկարահպատակ չը լինելը նշանակութիւն չունի: Փիլիպէցիները այդ մասին անագին զրազրութիւն ունեցած են Պատրիարքարանի հետ: Օտարահպատակ հայերը իբր նոյն եկեղեցւոյ ծուխ կատարեալ իրաւունք ունին մասնակցելու ընտրութեան:

Մօսկուայի համալսարանի իրաւաբանական բաժնին մէջ գասախօսող հայ բրոֆէսօր Ի. Ս. Գամբարով հրաժարեցուցած են իր պաշտօնէն. թէեւ ուսուցիչը իր պաշտօնէն թէ ինք հրաժարած է, բայց մենք մասնաւոր աղբիւրէ տեղեկացած ենք որ հրաժարեցուցած են իբր ազատամիտ և ուսանողներու բարեկամ մէկը:

Նրեւանի խանութներէն մէկուն մէջ ի ցոյց դրուած է Գէորգ Դ. կաթողիկոսի կիսարձանը, որ պատուիրուած էր Էջմիածնի կողմէն, ճեմարանի 25 ամիակի առթիւ:

Կիտարձանը պատրաստած է երիտասարդ քանդակագործ Ա. Տէր Մարուզեան:

Տիկին «Եղբ. Մովսէսեան և ընկ.» վաճառատունը ուսուցանողութեան 25 տարուան մենաշնորհ ստացել է Սեւանա լճին վրայ շոգեխաններ պահելու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Տահմէթի ժամանակաւոր կառավարիչը՝ հեռագրով տեղեկացուցել է Ֆրանսայի դադութներու նախարարին թէ՛ գերմանօֆրանսական յանձնախումբը, որուն յանձնուած է որոշել ֆրանսական կալուածներու և Տօկօ դադութին սահմանադրեցը, հանդիպել է քաֆրներու դիմադրութեան:

Այդ ժողովրդին զինուած դիմադրութիւնը յաղթելու համար ֆրանսացիք և գերմանացիք միասին են և իրենց առաջնորդ ունենալով ֆրանսական քօմիսէրը և զօրախմբի պետը կ'է յարձակուել են դիմադրողներուն վրայ: Քանի մը ընդհարումներէն յետոյ՝ ապստամբները, որոնք զգալի կորուստ ունեցած են, ցրուել են:

Աղատ Օրանժի քանի մը զօրավարներ հասած են Բրէտօրիս և տեսակցել են մէնէրալ ժուպէրին հետ:

Բրէտօրիսի մէջ պեղծիքացիները մեծ միթիկ մը բեր են ի նշան համակրանաց Թրանսվալի և յայտարարած են թէ իրենք միմիայն Թրանսվալին հրամանին կսպասեն Հօլանտական զօրազունտերուն միանալու համար:

«Ն. Պ. Լ.» թերթին խմբագիրներէն մին տեսակցել է Ռուսական Սինօթի զլխաւոր դատախազ Բաբէտանօսցէվէին հետ՝ անոր վիէննայէն անցած միջոցին, Խօսակցութեան ամենահետաքրքրելի մասը կը վերաբերի Ռուսիոյ կաթողիկոսներուն:

Բաբէտանօսցէվ յայտարարած է թէ ինք թշնամի չէ կաթողիկոսութեան, սուտ է թէ Ռուսիան կաթողիկոսները կը հալածէ. շատ ուսներ կան որ բաձարցակա-

պէս կաթողիկոսները կը դաւանին: Այնուամենայնիւ պատրաստ են ջախջախել կաթողիկոսութիւնը, երբ ան լեհական զրգուռներ յարուցանելու գործիք կըլլայ:

Պուլկարիոյ ելեւմտից նախարար Պ. Խէնէվ մօտերս վիէննայէն անցած միջոցին տեսակցել է փոխառութիւնը ստորագրող պանքերու հետ: Պանքերը համաձայնած են հոկտեմբերին վճարել 35 միլիօն ֆրանք իսկ յունվարին ինը միլիօն:

Իրլանտիոյ Միւլինժէն քաղաքի մէջ խառնակութիւններ տեղի ունեցել են, որովհետեւ Շէրիֆը արգելել է գօմիթէի խորհրդարանին շինութեանը վրայ Իրլանտական դրօշակ բարձրացնել. ամբողջ շինութիւնը սիրապետել է ոստիկանութեան հետ կռիւի մտնելով: Վերջապէս դրօշակը պարզել են պատահաններէն միոյն մէջ: Քանի մը թեթեւ վիրաւորեալներ կան:

Կրէտէի կառավարութիւնը յայտարարած է մամլոյն վերաբերեալ օրէնքը: Այս օրէնքը զգալի կերպով կը տարբերի միւս բոլոր քաղաքական և վարչական օրէնքներէն, որոնցմով կրէտէն օժտած է նոր կառավարութիւնը: Այս օրէնքը բաւական կը սահմանափակէ մամլոյ ազատութիւնը, ուրեմն այնքան ազատական չէ, որչափ միւս օրէնքները: Իշխան ժէօրժը և իր խորհրդականները մտածած են որ առաջին տարիները բաձարցակապէս ազատ մամուլը կ'ըլլայ իսկական շահերուն համար վնասակար պիտի ըլլայ:

Ստակին վերաբերեալ օրէնքը պիտի յայտարարուի այս օրերս: Իրամական միութիւնը ընդունուած է յունական տրախմբը, որը պիտի համապատասխանէ ֆրանսական ֆրանքին: Կրետական կառավարութիւնը, շուտով Փարիզ պատուէր պիտի տայ կրետական դրամ կտրելու Եօրկիոս իշխանի պատկերովը: 20 10 ֆրանքնոց ոսկի և 5, 2, 1, և կէօ ֆրանքնոց արծաթ, իսկ մանրուքը նիքելէ:

Տրէյֆիւս հասած է կարբանթրա, Փիկարօի խմբագիրներէն մին տեսակցելով հետը, հարցուցել է թէ ինք շատ նամակ գրած է. Տրէյֆիւս պատասխանած է. ոչ, ժամանակ չունէի, երեւակայեցէք որ հինգ հազարէն աւելի նամակ ստացած եմ, բացի կնոջս ստացածները: Եւ այդ նամակները շատ զգաւուն են. զրոյններուն մէջ կը գտնուին և պաշտօնի մէջ գտնուող սպաններ, որոնք ստորագրած են իրենց անունները: Ընկերներէս մին գրած է. «Երջանիկ եմ վերադարձիք համար, երջանիկ և քս սպայութեանդ մէջ ապագայ վերահաստատումով»:

Այս ինձ շատ կը մխիթարէ: Իսկ ներման մասին Տրէյֆիւս

լսած է. . . . ես ներում չը խնդրեցի, բայց կնոջն իբր թեթեւացում և իմ կնոջս վշտերուն, որովհետեւ մենք ատոր պէտքը ունինք:

Սակայն այդ ներումը զիս ետ չի կեցնել իմ որոշումներէս, հետապնդել սպայութիւնս վերստանալ: Էեմ ընդունել որ հայհօյանք և ոչ սպառնալիք, նոյնպէս և թուլութիւն, բարոյական թուլութիւն: Ձէ որ հոգին պիտի տիրապետէ մարմնոյն վրայ»:

ԳԱՐԵՋՐԱՏՈՒՆ ԵՒ ՍՐՃԱՐԱՆ «Սանքրալ»

Հանրաձանօթ զբօսարանապետ Տիգրան Թիւֆէնքճեան պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Մուսալայի հրապարակին վրայ բացած եմ «Սանթրալ» գարեջրատունը, ուր ամէն տեսակ ըմպելիք, սեղանի թէ եւրոպական, ընտիր տեսակներէն՝ պատրաստ են գոհացնելու ամենէն խոտապահանջ փափկաճաշակները: Աւելորդ է ըսել թէ սպասարկութիւնը անթերի և սպասք յետին ծայր մարուր են: Այս առաւելութիւններով հանդերձ գիները յոյժ դիւրամտ չեւի:

ԿԸ ՎԱՃԱՌՈՒՄ

Պուլկարական գործածուած ամէն տեսակ նամակագրոյմներ եւ բաց նամակներ:

Դիմել առ Մուրաճ Երանոսեան (Վառնա)

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ ՀԱՅԿԱՅԱՆ ԿԱՄ ՀԱՒԱՎ ԱՄՈՅ

Հին եւ նոր Աղբ. երգերու զին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Չարպահանջեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարդանկար և վիպական գրքեր. գրամի փոխարէն կընդունին նաեւ նամակագրոյմ. Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյմներու:

Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ 40 Շ Կ Ա Կ Ա Ր

Մուսալայ, քաղնիք փողոց, Հաճի Հասանի օթիկան տակ:

Ճաշակաւոր, տոկուն եւ ձեւաւոր կօշիկ շինել տալ ուղղը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կ'ըլլայ:

Գիները իրիտ դիւրամտացիքի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՇԱՐԺՈՒՄ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցեւորման, նամակագրուի, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, լնչպէս նաեւ պրօշտիւններ:

Գիները յոյժ դիւրամտացիքի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Печатница «Взаимность» Варна